ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

14.09.2012թ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորավանի գյուղապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ / ծածկագիր 3.2-1 /:

1-ին կարգի մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ

ա) ապահովում է գույքահարկի տեղեկատվական տվյալների շտեմարանի հետ կապված աշխատանքները.

բ) ապահովում է իր կողմից սպասարկվող տեխնիկայի բնականոն և անխափան աշխատանքը.

գ) պատասխանատվություն է կրում գյուղապետարանից ելքագրվող համակարգչով տպագրված ծառայողական գաղտնիք պարունակող փաստաթղթերի գաղտնիության պահպանման համար.

- Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ է՝

ա) միջնակարգ կրթություն .

բ) սույն պաշտոնի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ իմացություն.

գ) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

- Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2012 թվականի հոկտեմբերի 17-ին ժամը 12.00-ին Նորավանի գյուղապետարանի շենքում:
- Դիմող ՀՀ քաղաքացիները գյուղապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.
- դիմում մրցույթային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս).
- տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակների հետ միասին.
- հայտարարություն այն մասին , որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 3-ի N 310-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.
- հայտարարություն այն մասին , որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
- արական սեռի անձինք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականների պատճենները.
- մեկ լուսանկար 3X4 սմ չափսի.
- անձնագրի պատճենը.
- սոցիալական քարտի պատճենը:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու , ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Նորավանի գյուղապետարան և ՀՀ Արմավիր մարզպետարանի ՏԻՄ և ՀԳՄՏԾ վարչություն (հասցեն՝ ք. Արմավիր Աբովյան -71, հեռ՝. / 0237 / 2-07-70):

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10.00-ից 16.00-ն , բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2012 թվականի հոկտեմբերի 1-ը: